

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մասնակցություն միջոցառումներին

- ✓ 2019թ. նոյեմբերի 5-8-ը Արմատատի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը որպես դիտորդ մասնակցել է ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած «Պաշտոնական վիճակագրության մեջ SS-ի հատվածի վերանայում» խորագրով հանդիպմանը,
- ✓ 2019թ. նոյեմբերի 12-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Կոպենհագենում (Դանիա) կայացած Եվրոպական հարևանության գործիքի ներքո ընթացող Շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգ – Արևելք II» (ENI SEIS II East) ծրագրի դեկավար կոմիտեի 4-րդ նիստին,
- ✓ 2019թ. նոյեմբերի 12-15-ը ՀՀ ՎՊԽ անդամ – Արմատատի նախագահի տեղակալ Գ. Գևորգյանը, Արմատատի մարդահամարի վարչության պետ Վ. Գևորգյանը և նույն վարչության պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ Գ. Մելիքսեթյանը մասնակցել են ք. Կիևում (Ուկրաինա) կայացած «Վարչական տվյալներով իրականացվող մարդահամարներ, ավանդական մարդահամարներից անցում դեպի ռեգիստրների վրա հիմնված կամ համակցված մարդահամարներ» խորագրով սեմինար-դասընթացին,
- ✓ 2019թ. նոյեմբերի 13-15-ը Արմատատի վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը և միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը մասնակցել են ք. Նյուշատելում (Շվեյցարիա) կայացած «Փաստերի վրա հիմնված որոշումներ կայացնելու համար ցուցանիշների համակարգի մշակումը և օտագործումը» խորագրով դասընթացին,
- ✓ 2019թ. նոյեմբերի 13-15-ը Արմատատի գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանը և բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը մասնակցել են ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «Ռեսուրսների արտադրություն» խորագրով միջազգային աշխատաժողովին և «Վիճակագրության համար թվային օրակարգ, օպերատիվություն, որակ, թափանցիկություն» խորագրով միջազգային համաժողովին,

- ✓ 2019թ. նոյեմբերի 14-15-ը Արմատատի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ջանլաթյանը մասնակցել է ք. Նուր-Սուլթանում (Ղազախստանի Հանրապետություն) կայացած «Ապրանքների միջազգային առևտրի վիճակագրություն» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2019թ. նոյեմբերի 18-22-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Նյու Դելիում (Հնդկաստան) կայացած Գյուղատնտեսական վիճակագրության վերաբերյալ ութերորդ (ICAS-VIII) միջազգային կոնֆերանսին,
- ✓ 2019թ. նոյեմբերի 18-29-ը Արմատատի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը և «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ծրագրի համակարգող Տ. Գևորգյանը մասնակցել են ք. Թուրինում (Իտալիա) կայացած «Նախապատրաստում և հարմարեցում ապագայի աշխատանքի համար. վիճակագրություն և վերլուծություն» խորագրով դասընթացին,
- ✓ 2019թ. նոյեմբերի 20-22-ը Արմատատի «Վիճակագրական տեղեկատվության հավաքում» ծրագրի վիճակագիր Ա. Պողոսյանը մասնակցել է ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած Եվրոպական հարևանության գործիքի ներքո ընթացող Օդի որակի մոնիթորինգի և հաշվետվողականության տարածաշրջանային սեմինարին,
- ✓ 2019թ. նոյեմբերի 21-22-ը Արմատատի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Միլանում (Իտալիա) կայացած Արևելյան գործընկերության 2017-2020թթ. Պլատֆորմ-4 ծրագրի շրջանակում կազմակերպված «Մեծ տվյալներ. տեղեկատվության աշխատանքի շուկայի վերաբերյալ. կենտրոնացում թափուր աշխատատեղերի առցանց տվյալների վրա» խորագրով ուսուցողական աշխատաժողովին,
- ✓ 2019թ. նոյեմբերի 26-27-ը ՀՀ ՎՊԽ անդամ – Արմատատի նախագահի տեղակալ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Վիեննայում (Ավստրիա) կայացած TRANSMONEE ծրագրի շրջանակում անդամ-երկրների համակարգողների ամենամյա հանդիպմանը,
- ✓ 2019թ. նոյեմբերի 26-28-ը Արմատատի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ Կ. Եսայանը մասնակցել է ք. Մինսկում (Բելառուսի Հանրապետություն) կայացած

Երկրատարածական ամբողջական տեղեկատվության համակարգի իրականացման շրջանակում երրորդ միջազգային սեմինարին,

- ✓ 2019թ. նոյեմբերի 27-28-ը Արմատատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Տաշքենդում (Ուզբեկստան) կայացած «2020թ. շրջափուլի մարդահամարներին առնչվող հարցերը ԱՊՀ անդամ երկրներում» խորագրով խորհրդածոլովին,
- ✓ 2019թ. դեկտեմբերի 3-4-ը Արմատատի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը մասնակցել է ք. Ստոկհոլմում (Շվեդիա) կայացած ԵՄ Արևելյան գործընկերության Պետական կառույցների հզորացում և լավ կառավարում պլատֆորմի Կառավարման և հանրային վարչարարության բարեփոխման հարցերով պանելի 17-րդ հանդիպմանը,
- ✓ 2019թ. դեկտեմբերի 4-6-ը ՀՀ ՎՊԽ անդամ – Արմատատի նախագահի տեղակալ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Աղքատության և անհավասարության չափումը. ԿԶՆ 1-10 ցուցանիշների չափման համար» խորագրով փորձագիտական խմբի հանդիպմանը և «Աղքատության վիճակագրության ներդաշնակեցումը՝ ԿԶՆ 1 ցուցանիշի չափման համար» աշխատանքային խորհրդակցությանը,
- ✓ 2019թ. դեկտեմբերի 10-11-ը Արմատատի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ա. Գրիգորյանը մասնակցել է ք. Մինսկում (Բելառուսի Հանրապետություն) կայացած Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների համար կազմակերպված Սոցիալական հետազոտությունների մեթոդաբանության վերաբերյալ աշխատածոլովին,
- ✓ 2019թ. դեկտեմբերի 10-11-ը Արմատատի «Վիճակագրական տեղեկատվության հավաքում» ծրագրի աշխատուժի ընտրանքային հետազոտության ղեկավար Լ. Մաքսուդյանը մասնակցել է ք. Փարիզում (Ֆրանսիա) STEP ծրագրի շրջանակում կայացած «Տվյալների հավաքագրման ժամանակակից SCS գործիքների օգտագործման վերաբերյալ» խորագրով ուսումնական այցին,
- ✓ 2019թ. դեկտեմբերի 10-12-ը Արմատատի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Գ. Պետրոսյանը մասնակցել են ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած ԱՊՀ երկրների վիճակագրական ծառայությունների մասնագետների աշխատանքային սեմինար-խորհրդակցությանը,

- ✓ 2019թ. դեկտեմբերի 10-13-ը Արմատատի որակի կառավարման բաժնի պետ Ռ. Շաբոյանը և միջազգային վիճակագրական համակործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը մասնակցել են ք. Բելգրադում (Սերբիա) կայացած «Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրներում պաշտոնական վիճակագրության որակի ապահովման ազգային շրջանակը» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2019թ. դեկտեմբերի 10-13-ը Արմատատի գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանը մասնակցել է ք. Չիբայում (Ճապոնիա) կայացած դեկտեմբերի 10-ին՝ Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում վիճակագրական վերապատրաստումների համակարգման ցանցի հանդիպմանը, դեկտեմբերի 11-12-ը՝ Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ծառայությունների ղեկավարների համար կազմակերպվող կառավարման 14-րդ սեմինարին, դեկտեմբերի 13-ին՝ «SCS կիրառումը պաշտոնական վիճակագրության ոլորտում» խորագրով սեմինարին,
- ✓ 2019թ. դեկտեմբերի 12-ին Արմատատի նախագահ Ս. Մնացականյանը մասնակցել է ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած Եվրասիական տնտեսական միության և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի անդամ պետությունների ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարների աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2019թ. դեկտեմբերի 17-20-ը Արմատատի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը և նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ն. Բաբոյանը մասնակցել են ք. Կիևում (Ուկրաինա) STEP ծրագրի շրջանակում կայացած Ազգային հաշիվների համակարգ (ԱՀՀ) 1993-ից ԱՀՀ 2008-ի (ԵՀՀ-2010-ի) անցումը ավարտելու վերաբերյալ հանդիպմանը,
- ✓ 2019թ. դեկտեմբերի 17-20-ը Արմատատի արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետներ Հ. Հովհաննիսյանը և Ք. Սիմոնյանը մասնակցել են ք. Ալմաթիում (Ղազախստան) կայացած Բնապահպանական-տնտեսական հաշվառման, էներգետիկ հաշիվների ստեղծման և քաղաքականության մշակման վերաբերյալ տարածաշրջանային ուսուցողական դասընթացին:

Առաքելություններ

- ✓ 2019թ. նոյեմբերի 4-8-ը Արմատատում էր «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ECASAT դրամաշնորհային ծրագրի ԹՎԻՆԻՆԳ գործընկերության թիմի ղեկավար Իգոր Չերնիշևը՝ «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT դրամաշնորհային ծրագրի շրջանակում խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2019թ. նոյեմբերի 5-7-ը Արմատատում էին ՄԱԿ Կանայք-ի խորհրդատու Մարջան Պետրեսկին և Վրաստանի գրասենյակի ծրագրի վերլուծող Նանի Բենդելիանին՝ Հարավային Կովկասում կանանց տնտեսական հզորացման ծրագրի շրջանակում «Աշխատավարձի գենդերային խզվածքը Հայաստանում» խորագրով ուսուցում անցկացնելու նպատակով,
- ✓ 2019թ. նոյեմբերի 11-15-ը Արմատատում էին Համաշխարհային բանկի ավագ տնտեսագետ Ալան Ֆուչսը, տնտեսագետներ Սեզար Ա. Կանչոն և Դիրաջ Շարման, հետազոտության վերլուծաբան Ջոննաթան Ջորջ Քարվերը և խորհրդատուներ Հայդիլիզ Կարասկո Նունեզը, Մարիա Ֆերնանդա Գոնսալեզ Իկազան և Ռաիսա Չանդրաշեխար Բեհալը՝ Համաշխարհային բանկի և Արմատատում միջև ընթացիկ համագործակցության և տեխնիկական աջակցության վերաբերյալ հարցերը քննարկելու, ինչպես նաև «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2019թ.» զեկույցի մեկնարկի վերջնական նախապատրաստական աշխատանքներն իրականացնելու նպատակով,
- ✓ 2019թ. նոյեմբերի 25-29-ը Արմատատում էր Լիտվայի վիճակագրության փորձագետ Նադեժդա Ֆուրսովան՝ «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT դրամաշնորհային ծրագրի «Ինստիտուցիոնալ կառուցվածքը և պաշտոնական վիճակագրության վերաբերյալ օրենքը» բաղադրիչի շրջանակում աջակցություն ցուցաբերելու նպատակով,

- ✓ 2019թ. նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 6-ը Արմատատում էր Ռուսաստանի Դաշնության տնտեսագիտության բարձրագույն դպրոցի պրոֆեսոր Ալեքսեյ Պոնոմարենկոն՝ «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT դրամաշնորհային ծրագրի «Ռեսուրսներ-օգտագործում աղյուսակներ» և «Ծախսեր-թողարկում աղյուսակներ» բաղադրիչի շրջանակում խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2019թ. դեկտեմբերի 2-6-ը Արմատատում էին Եվրոստատի կողմից հաստատված անկախ փորձագետներ Կարլո Վաքարին, Քրիստիան Լոնոն և Միռա Նիքիլը, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի փորձագետ Սթիվեն Վեյլը և որպես դիտորդ Վրաստանի ազգային վիճակագրական գրասենյակի տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետ Ալեքսանդր Ամբրոկաձեն՝ Արմատատում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտային գնահատում իրականացնելու նպատակով,
- ✓ 2019թ. դեկտեմբերի 3-5-ը Արմատատում էին Համաշխարհային բանկի ECASTAT դրամաշնորհային ծրագրի Թվինինգ գործընկերության ծրագրի տնօրեն Մարգարիտա Ռոհրը, «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ECASTAT դրամաշնորհային ծրագրի Թվինինգ գործընկերության թիմի ղեկավար Իգոր Չերնիշևը և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի փորձագետ Սթիվեն Վեյլը՝ Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի (GSBPM), Վիճակագրական կազմակերպությունների համար ընդհանուր գործունեության մոդելի (GAMSO), Ընդհանուր վիճակագրական տեղեկատվական մոդելի (GSIM), Միասնական վիճակագրական արտադրության ճարտարապետության մոդելի (CSPA) վերաբերյալ սեմինար անցկացնելու նպատակով,

- ✓ 2019թ. դեկտեմբերի 17-23-ը Արմատատում էին Համաշխարհային բանկի փորձագետներ Սաիդա Իսմայլախունովան և Լիլիա Սաետովան՝ «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT դրամաշնորհային ծրագրի իրականացման միջնաժամկետ գնահատում անցկացնելու նպատակով,
- ✓ 2019թ. դեկտեմբերի 9-13-ը Արմատատում էին ՄԱԿ-ի Պարենի և գյուղանտեսության կազմակերպության վիճակագրության բաժնի վիճակագիրներ Նելի Գեորգիևան և Աիդա Խալիլը՝ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Գյուղատնտեսական ինտեգրված հետազոտության (AGRIS) ծրագրի շրջանակում աջակցություն ցուցաբերու նպատակով,
- ✓ 2019թ. դեկտեմբերի 9-13-ը Արմատատում էին Համաշխարհային բանկի ավագ տնտեսագետ Ալան Ֆուչսը և տնտեսագետ Դիրաժ Շարմը՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» զեկույցի շնորհանդեսին մասնակցելու և աղքատության գնահատման մեթոդաբանության արդիականացման նպատակով:

Տեղային սեմինարներ

- ✓ 2019թ. նոյեմբերի 4-ին Արմատատի ֆինանսների վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Լ. Ասլանյանը մասնակցել է ք. Գյումրիում կայացած Տարածքային զարգացման և սմարթ մասնագիտացման վերաբերյալ ազգային կոնֆերանսին,
- ✓ 2019թ. նոյեմբերի 4-8-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը, Արմատատի արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Հ. Հակոբյանը, գյուղատնտեսության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետներ Ռ. Վարդանյանը և Լ. Գրիգորյանը, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդալյանը և առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Ջերմոցային գազերի ազգային կադաստրի կառավարման համակարգի և Հայաստանի ջերմոցային գազերի ազգային կադաստրի որակի ապահոցում» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2019թ. նոյեմբերի 5-ին Արմատատի արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը, մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը և վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Բ. Պողոսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության առաջին վավերացման գործընթացի շրջանակում հանքարդյունաբերության ոլորտի վիճակագրության մշակման համար հանդիպմանը,
- ✓ 2019թ. նոյեմբերի 5-7-ը Արմատատի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Հունանյանը, աշխատուժի ընտրանքային հետազոտության տվյալների բազայի մասնագետ-տեխնիկ Ս. Ջեյնալյանը, նույն ծրագրի ծրագրավորող Վ. Սեդրակյանը, մարդահամարի վարչության ՏՏ և ծրագրավորման բաժնի մասնագետ Լ. Հարությունյանը, գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի գլխավոր մասնագետ Գ. Պետրոսյանը և մարդահամարի և ժողովրդագրության բաժնի առաջատար մասնագետ Ա. Ավետիսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Հարավային Կովկասում կանանց տնտեսական հզորացման ծրագրի շրջանակում «Գենդերային վճարման բացը Հայաստանում» խորագրով դասընթացին,

- ✓ 2019թ. նոյեմբերի 5-29-ը Արմատատի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի ավագ մասնագետ Ա. Խամոյանը, նույն բաժնի մասնագետներ Ա. Նալբանդյանը և Վ. Սողբայանը, տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Կարապետյանը և նույն բաժնի երկրորդ կարգի մասնագետ Լ. Ավետիսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Աղքատության վիճակագրությունը ԿՀՆ-ի համար» խորագրով առցանց դասընթացին,
- ✓ 2019թ. նոյեմբերի 6-ին Արմատատի աշխատանքի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ջ. Ավոյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Աշխատել Հայաստանի ավելի լավ ապագայի ապահովման համար. աշխատաշուկայի դինամիկայի վերլուծություն» աշխատաշուկայի ախտորոշիչ ուսումնասիրությանը և միգրացիային նվիրված «Աշխատուժի միջազգային շարժունության ավելի լավ ընկալում» շրջանակային փաստաթղթի ներկայացմանը,
- ✓ 2019թ. նոյեմբերի 6-ին Արմատատի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ա. Գրիգորյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Հայաստանում սոցիալական պաշտպանության համակարգի և ծրագրերի խորքային գնահատման (CODI գործիք) շնորհանդեսին,
- ✓ 2019թ. նոյեմբերի 6-ին Արմատատի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Լ. Բեյբոյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Փարիզյան համաձայնագրի ներքո ազգային մակարդակով սահմանված ներդրումների վերաբերյալ աշխատաժողովին,
- ✓ 2019թ. նոյեմբերի 13-15-ը Արմատատի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել է ք. Ծաղկաձորում կայացած ՄԱՀԾ ԱՌՆ ծրագրի կողմից կազմակերպված «Հետադետային կարիքների գնահատման գործիքակազմի տեղայնացում և հետադետային վերականգման մեխանիզմների մշակում» խորագրով դասընթացին,
- ✓ 2019թ. նոյեմբերի 15-ին Արմատատի աշխատուժի ընտրանքային հետազոտության տվյալների բազայի մասնագետ-տեխնիկ Ս. Ջեյնալյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Անցումը դեպի աշխատաշուկա. առկա խնդիրներ և համագործակցությանն ուղղված քայլեր» խորագրով կլոր սեղան քննարկմանը,

- ✓ 2019թ. նոյեմբերի 19-ին Արմատատի գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանը և միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Արտաքին գործերի բնագավառում պետական կառավարման համակարգի մարմինների համակողմանի համագործակցության հարցերի շուրջ աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2019թ. նոյեմբերի 19-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման միջգերատեսչական հանձնաժողովի նիստին,
- ✓ 2019թ. նոյեմբերի 19-ին ՀՀ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ա. Գրիգորյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ջ. Ավոյանը, աշխատուժի ընտրանքային հետազոտության տվյալների բազայի մասնագետ-տեխնիկ Ս. Ջեյնալյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Մեծ քսանյակի (G20) ուսուցման ռազմարության կիրառումը. ԱՄԿ-ի և ՌԴ գործըկերություն» ծրագրի շրջանակներում իրականացվող «Հմտությունների զարգացման ռազմավարական նպատակների և համապատասխան ցուցանիշների համաձայնեցումը Միջազգային մարդկային զարգացման (ՄՄՁ) քաղաքականության գործիքների հետ» փորձնական ծրագրի արդյունքների վերաբերյալ աշխատաժողով,
- ✓ 2019թ. նոյեմբերի 20-ին Արմատատի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ա. Գրիգորյանը և աշխատուժի ընտրանքային հետազոտության տվյալների բազայի մասնագետ-տեխնիկ Ս. Ջեյնալյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Մեծ քսանյակի (G20) ուսուցման ռազմավարության կիրառումը. ԱՄԿ-ի և ՌԴ գործըկերություն» ծրագրի 2019թ. արդյունքները, ինչպես նաև 2020թ. ապագա քայլերը քննարկելու նպատակով Ծրագրի շահառու ԱՊՀ երկրներից ժամանած տեխնիկական փորձագետների մակարդակով հանդիպմանը,
- ✓ 2019թ. նոյեմբերի 21-ին Արմատատի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդալյանը մասնակցել է ք. Գյումրիում կայացած Գյումրի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրի նախագծի ներկայացմանը և դրա հանրային քննարկմանը,
- ✓ 2019թ. նոյեմբերի 22-23-ը Արմատատի աշխատուժի ընտրանքային հետազոտության տվյալների բազայի մասնագետ-տեխնիկ Ս. Ջեյնալյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Զբաղվածության պետական ռազմավարության շահագրգիռ կողմերի հանդիպմանը,

- ✓ 2019թ. նոյեմբերի 26-ին Արմստատի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Լ. Գրիգորյանը մասնակցել է ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած «ԵԱՏՄ անդամ պետությունների գյուղարդյունաբերական համալիրների զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ (5 տարի և 10 տարի) կանխատեսման ձևավորման մեթոդաբանության մշակում» խորագրով գիտահետազոտական աշխատանքի արդյունքների նախնական հաշվետվության դիտարկմանը,
- ✓ 2019թ. նոյեմբերի 26-ին Արմստատի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Բ. Պողոսյանը, մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը և նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Մովսիսյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած «ԵԱՏՄ «ծախսեր-թողարկում» միջպետական աղյուսակի կառուցման մեթոդաբանության մշակում, Միության ինտեգրման ներուժի փորձնական հաշվարկ և գնահատում» խորագրով գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներկայացում,
- ✓ 2019թ. նոյեմբերի 28-ին Արմստատի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Բ. Պողոսյանը, մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը և նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Մովսիսյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած ԵԱՏՄ ինտեգրման ներուժի ձևավորման և գնահատման համար «ծախսեր-թողարկում» պետական և միջպետական աղյուսակների կիրառման գծով փորձագիտական խմբի 10-րդ նիստին,
- ✓ 2019թ. նոյեմբերի 28-29-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը, Արմստատի տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ Լ. Մարկոսյանը, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Թոխաթյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Սողոմոնյանը և սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Հ. Սիմոնյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Իրավունքահեն տվյալների հավաքագրման սեմինարին,
- ✓ 2019թ. նոյեմբերի 27-ին Արմստատի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ա. Գրիգորյանը, նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Հ. Սիմոնյանը և աշխատուժի ընտրանքային հետազոտության տվյալների բազայի մասնագետ-տեխնիկ Ս. Ջեյնալյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Թուրինի 2018-2020թթ. գործընթացի իրազեկման հանդիպում: Ազգային զեկույցի

հիմնական եղրակացություններն ու առաջարկությունները և ԵԿՀ գնահատումը» խորագրով միջոցառմանը,

- ✓ 2019թ. նոյեմբերի 28-ին Արմատատի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ա. Գրիգորյանը և վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի գլխավոր մասնագետ Ն. Մարգարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Հայաստանում սոցիալական գովազդի ինստիտուցիոնալ կայացման միջոցով հանրային քաղաքականությունների և սոցիալական երկխոսության բարելավում» խորագրով խորհրդաժողովին,
- ✓ 2019թ. նոյեմբերի 29-ին Արմատատի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Գրիգորյանը և աշխատանքի վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Կ. Սարգսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» ծրագրի փակման արարողության միջոցառմանը,
- ✓ 2019թ. դեկտեմբերի 3-ին Արմատատի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Կովկաս և Կենտրոնական Ասիա. Տնտեսական աշխարհայացքի և քաղաքականության մարտահրավերների ներկայացմանը,
- ✓ 2019թ. դեկտեմբերի 4-ին Արմատատի մարդահամարի վարչության 11 աշխատակից, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը և նույն բաժնի առաջատար մասնագետ Ա. Ավետիսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Հայաստանի Հանրապետությունում 2020թ. ազգային մարդահամարի ընթացքում փախստականներին և քաղաքացիություն չունեցող անձանց առնչվող տվյալների հավաքագրման և ստուգման վերաբերյալ կլոր սեղան քննարկմանը,
- ✓ 2019թ. դեկտեմբերի 5-ին Արմատատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության կանխարգելման քաղաքականության և ծրագրերի մշտադիտարկման շրջանակի և հաղորդակցության ռազմավարության ներկայացում» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2019թ. դեկտեմբերի 5-ին Արմատատի նախագահի խորհրդական Դ. Մարտիրոսովան, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, սոցիալական ոլորտի և բնակահպանության վիճակագրության բաժնի պետ Ա. Գրիգորյանը, վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի գլխավոր մասնագետ

Ն. Մարգարյանը, գյուղատնտեսության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Լ. Գրիգորյանը, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդայանը, միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջին կարգի մասնագետ Վ. Սողբայանը և աշխատուժի ընտրանքային հետազոտության տվյալների բազայի մասնագետ-տեխնիկ Ս. Ջեյնայանը մասնակցել են ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին և կամավոր ազգային զեկույց ներկայացնելու գործընթացին նվիրված աշխատաժողովին,

- ✓ 2019թ. դեկտեմբերի 12-13-ը Արմատատի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետներ Ռ. Վարդանյանը և Լ. Գրիգորյանը և նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Լ. Թումանյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամ ՊԳԿ գյուղատնտեսության ինտեգրացված հետազոտությունների իրականացում (AGRIS) ծրագրի շրջանակում դասընթացավարների նախապատրաստմանը նախնական հարցաշարին և ուսուցմանը,
- ✓ 2019թ. դեկտեմբերի 13-ին Արմատատի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Հակոբյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ վարչական տվյալների հավաքագրում. միջազգային փորձ, խոչընդոտներ և հեռանկարներ» խորագրով կլոր սեղան քննարկմանը,
- ✓ 2019թ. դեկտեմբերի 17-ը Արմատատի նախագահի խորհրդական Դ. Մարտիրոսովան մասնակցել է ք. Երևանում կայացած «Իրավունքահեն արձագանք աղքատությանը» նախագծի շրջանակներում կատարված հետազոտական աշխատանքների արդյունքների հանրային ներկայացմանը,
- ✓ 2019թ. դեկտեմբերի 17-19-ը Արմատատի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Աղետների կորստի շտեմարան և հետադետային վերականգնում» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2019թ. դեկտեմբերի 20-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը և Արմատատի արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «ԵՄ-ը կլիմայի համար» ծրագրի շրջանակում կազմակերպված «COP 25 – Գործիր հիմա. Հայաստանն արագացնում է Փարիզի համաձայնագրի իրականացումը» խորագրով կլոր սեղան քննարկմանը,

- ✓ 2019թ. դեկտեմբերի 26-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանում կանայք հանուն կլիմայի և էներգետիկայի» խորագրով համաժողովին,
- ✓ 2019թ. դեկտեմբերի 27-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Անչափահասների արդարադատության Խորհրդի նիստին: